Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

646768U4U5A-P66U4U5A

Շթ. 31 Մայիս.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Գուսան Վրդ. Ալնանեան:

4pp. 1 Յունիս.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Արիս Եպս. Շիրվանեան: Ժամարարն էր Տ. Նորայր Արդ. Գազագեան:

- 4tuopt bost obyh nibbgui «Шаңшимша»: Հшаңришуров tp S. Црри буи. Бррушавша:

Գ. 4 Յունիս.- Կէսօրէ Խոք, Տ. Արիս Եպս. Շիրվանbանի գլխաւորութեամբ Միաթանութիւնը ինքնաշարժերով թարձրացան Չիթենեացլեո, ուր Համբարձման սրթավայրին մօտ կառուցուած վրանամատրան մէջ պաշտուեցան ժամերգութիւն եւ նախատօնակ։

Երեկոյեան, նոյն վայրին մէջ պաշտուեցան Առաւօտեան եւ Գիշերային ժամերգութիւնները:

b2. 5 Յունիս.- Համբարձումն Տեսոն։ Առաւօտուն, Տ. Արիս Եպս. Շիրվանեանի գլխաւորութեամբ Միաբանութիւնը ինքնաշարժերով բարձրացաւ Չիթենեաց լեռ, ուր «Հրաշափառ»ով կատարուեցաւ պաշտօնական մուտք Սրբավայրէն ներս:

Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատոյց եւ քարոզեց Տ. Արիս Եպս. Շիրվանեան։

Պատրիարք Սրրազան Հայրը. պատարագին սկիզրը ժամանելով, այցելեց Մզկիթի պահապաններուն, ապա նախագահեց Մայր Աթոռոյ Սիսէն Ս. Էջմիածին փոխադրութեան տարեդարձին (1441) առթիւ կատարուած «Հայրապետական Մաղթանք»ին։

Պատարագի վերջաւորութեան սրբատեղւոյն առջեւ կատարուեցառ «Անդաստան», հանդիսապետութեամբ Պատարագիչ Սրթագանին։

Շр. 7 Յունիս.- Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Նշան մատրան մէջ: Ժամարարն էր Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան։ - Երեկոյեան ժամերգութիւնը եւ

- Օրեկոյնան՝ ծանեյդուրդ նախատօնակը պաշտունցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ։ Հանդիսապետն էր Տ. Սեւան Եպս. Ղարիպեան:

Կիր. 8 Յունիս.- Երկրորդ Մաղկազարդ: Առաւօտուն ժամերգութիւնը կատարուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ։ Ժամերգութեան աւարտին տեղի ունեցաւ «Անդաստան»: Հանդիսապետն էր Տ. Սեւան Եպս. Ղարիպեան: Ժամարարն էր Տ. Համրարձում Վրդ. Քէշիշեան: Շր. 14 Յունիս.- Ս. Պատարագր

մատուցունցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Բագրատ Արդ. Պուրճէքնան:

- Հոգեգալստեան նախատօնակին ի Ս. Յակոր նախագահեց Պատրիարք Սրրազան Հայրը։

- Գիշերասկիզրին Մայր Տաճարին մէջ պաշտուած «Եկեսցէ»ի եւ «Հսկման» կարգերուն նախագահեց Պատրիարք Սրրազան Հայրը։

Կիր. 15 Յունիս.- Հոգհգալուստ։ Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատոյց Պատրիարք Սրրազան Հայրը: «Հոգի Աստուծոյ» երգէն առաջ, իր քարոզին միացուց Սրրոյն Յովհաննու Ոսկերերանի աղօթքը, ուղղուած Ս. Երրորդութեան երեք անձերուն:

Սպասարկողներն էին Տ. Թէոդորոս Արդ. Ջաքարեան եւ Տ. Էմմանուէլ Արդ. Աթաջանեան, իսկ բուրվառակիր-վարդապետներն էին Տ. Նորայր Արդ. Գազագեան եւ Տ. Իսահակ Արդ. Մինասեան:

- Կեսօրէ Խոք, Տ. Սեւան Եպս. Ղարիպեանի գլխաւորութեամբ Միաթանութիւնը գնաց դէպի վերջին ընթրեաց վերնատունը, ուր կատարուեցաւ ժամերգութիւն, ապա Ս. Փրկիչի մէջ Հոգեհանգստեան Կարգ, հանգուցեալ Պատրիարքաց, Լուսարարպետաց Եւ միաթանից հոգիներուն ի հանգիստ:

Շթ. 21 Յունիս.- Ս. Պատարագը մատուցունցաւ ի Ս. Գլխադիր։ Ժամարարն էր Տ. Էմմանուէլ Արդ. Աթաջաննան։

Կիր. 22 Յունիս.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Լուսարարապետ Սրրագանը: Ժամարարն էր Տ. Ղեւոնդ Արդ. Յովհաննիսեան:

- Նախատօնակին ի Ս. Հրեշտակապետաց հանդիսապետեց Տ. Սեւան Եպս. Ղարիպեան։

П.р. 27 Эпіври.- Ъшрштовшурв р U. Эшупр հиварришцыты S. Ubiшв biqu. Хирририв: Շր. 28 Յունիս.- Ա. Գրիգոր Լուսաւորչին (հլն ի Վիրապեն): Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի աւանդատան Ս. Լուսաւորչի Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթճեան:

- Կէսօրէ Ետք Պատրիարք Սրրազանը նախագահեց «Կաթողիկէ Եկեղեցւոյ» նախատօնակին Եւ ծնրադիր «Տէր Ողորմեա» Երգուեցաւ ըստ սովորութեան։

4իր. 29 Յունիս.- <u>Տօն Կաթոդիկէ</u> Սրբոյ Էջմիածնի: Առաւօտեան ժամերգութեան աւարտին կատարուեցաւ «Անդաստան»: Հանդիսապետն էր Տ. Սեւան Եպս. Ղարիպեան:

U. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Նորայր Արդ. Գազագեան: «Հայր Մեր»էն առաջ կատարուեցաւ «Հայրապետական Մաղթանք» վասն Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, նախագահութեամբ Պատրիարք Սրբազան Հօր:

Շր. 5 Յուլիս.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Աւետիս Արդ. Իփրանեան:

4իր. 6 Յուլիս.- Ս. Պատարագը մատուցուհցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Լուսարարապետ Սրբազանը: Ժամարարն էր Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Ուր. 11 Յուլիս.- Նախատօնակին ի Ս. Յակոր հանդիսապետեց Լուսարարապետ Սրրազանը:

Շр. 12 Յուլիս.- <u>Ս. Գրիգոր Լուսաւորչին</u> (<u>Գիւտ Նշխարաց):</u> Մայր Տաճարի Ս. Մակարայ մատրան մէջ պատարագեց Տ. Համրարձում Վրդ. Քէշիշեան:

4 μρ. 13 3 πιμυ.- Երէկուան Ս. Գրիգոր Լուսաւորչի տօնին առթիւ, Ս. Պատարագը մատուցունցաւ Երուսաղէմի Հրէական բաժնին մէջ գտնուող Եւ մեծ Սուրբին անունը կրող Եկեղեցւոյ մէջ: Ժամարարը Եւ քարոզիչն էր Տ. Բագրատ Արդ. Պուրճէքեան:

Դը. 16 Յուլիս.- Նախատօնակին ի Ս. Յակոր նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը:

Ե2. 17 Յուլիս.- Ա. Թարգմանչաց Վարդապետացն Մերոց Սահակայ եւ Մեսրոպայ: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Նորայր Արդ. Գազազեան: «Հայր Մեր»էն առաջ քարոզեց Տ. Պարէտ Ծ. Վրդ. Երէցեան:

Շթ. 19 Յուլիս.- Ա. Տրդատայ Թագաւորին Մերոյ եւ Աշխեն Տիկնոջ եւ Խոսրովիդխտոյն: Ս. պատարագը մատուցուեցաւ Սուրբ Հրեշտակապետաց Եկեղեցւոյ մէջ։ Ժամարարն էր Տ. Տաթեւ Աւագ Քահանայ Թաթուլեան, Գալիֆորնիոյ Սան Տիէկօ քաղաքէն ուխտի եկած իր աղջիկ գաւակին հետ:

- Կէսօրէ bտf, նախատօնակին ի Ս. Հրեշտակապետաց հանդիսապետեց Տ. Արիս Եպս. Շիրվանեան:

4իր. 20 Յուլիս.- Գիւտ Տփոյ Ս. Աստուածածնի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ: Հանդիսապետն էր Տ. Արիս Եպս. Շիրվանեան: Ժամարարը եւ քարոզիչն էր Տ. Էմմանուէլ Արդ. Աթաջանեան:

Ուր. 25 Յուլիս.- Նախատօնակին ի Ս. Յակոր հանդիսապետեց Տ. Սեւան Եպս. Ղարիպեան:

Շր. 26 Յուլիս.- Երկոտասան Առաքելոցն Քրիստոսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Պօղոսի վերնամատրան մէջ։ Ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէրճեան։

Կիր. 27 Յուլիս.- Ս. Պատարագը մատուցունցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Եպս. Ղարիպեան: Ժամարարն էր Տ. Ընծանուէր Արդ. Բարախանեան:

Ուր. 1 Օգոստ.- Նախատօնակ պաշտուեցա Մայր Տաճարին կից Ս. Էջմիածին մատրան մէջ։ Հանդիսապետն էր Տ. Սևւան Եպս. Ղարիպեան։

Շր. 2 Օգոստ.- Յիշատակ Տապանակին: Ս. Պատարագը մատուցունցաւ ի Ս. Լջմիածին։ Ժամարարն էր Տ. Ղեւոնդ Արդ. Յովհաննիսետն։

- Կեսօրե Ետք Այլակերպութեան մեծահանդես նախատօնակին Եւ Տեաոնեդրայթ Յակորոս Առաքեալի Յիշատակի հանդեսին նախագահեց Պատրիարք Սրրազան Հայրը։ Ապա «Օրհնեցեք գՏեր» շարականի երգեցողութեամբ Միարանութիւնը րարձրացաւ Պատրիարքարան։

- Գիշերասկիզրին Մայր Տանարին մեջ պաշտուած «Եկեսցէ»ի եւ Հսկման կարգերուն հանդիսապետեց Տ. Արիս Եպս. Շիրվանեան:

4իր. 3 Օգոստ.- Վարդավառ (Տօն Այլակերպութեան Տեառն): Ժամերգութեան աւարտին կատարուեցաւ «Անդաստան», հանդիսապետն էր Տ. Արիս Եպս. Շիրվանեան: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Աւագ Սեղանին վրայ մատոյց եւ քարոզեց Տ. Արիս Եպս. Շիրվանեան:

P2. 4 Oqnum.- Յիշատակ Մեռելոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր։ Ժամարարն էր Տ. Պարէտ Ծ. Վրդ. Երէցեան:

Ուր. 8 Օգոստ.- Նախատօնակին ի Ս. Յակոր հանդիսապետեց Տ. Արիս Եպս. Շիրվանեան։

digitised by A.R.A.R.@

Շբ. 9 Օգոստ.- <u>Թադէոսի Առաքելոյն եւ</u> <u>Սանդխտոյ Կուսին:</u> Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Նորայր Արդ. Գազագեան:

Շր. 16 Օգոստ.- <u>Արթոց Որդւոց եւ</u> <u>Թոռանց Արթոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ՝</u> Արիստակիսի, Վրթանիսի, Յուսկանն, Գրիգորիսի <u>Եւ Դանիէլի:</u> Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Կիր. 17 Օգոստ.- Ս. Պատարագը մատուցունցաւ ի Ս. Յարութիւն, մնր վնրնամատրան մէջ: Հանդիսապնտն էր Տ. Սնւան նպս. Ղարիպնան, որ կատարնց «Խաղողօրհնէք»ի արարողութիւնը։ Ժամարարն էր Տ. Աւնտիս Արդ. Իփրաճնան:

P2. 18 Օգոստ.- Այսօր սկսաւ Ս. Կոյսի Վերափոխման Տօնը կանխող հանդիսաւոր Ս. Պատարագներու մատուցումը Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ:

Շթ. 23 Օգոստ.- <u>Եփեսոսի Ս. Ժողովոյն:</u> Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Աստուածամայր: Ժամարարը եւ քարոզիչն էր Տ. Էմմանուէլ Արդ. Աթաջանեան:

Կիր. 24 Օգոստ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Աստուածամայր: Ժամարարն էր Տ. Բագրատ Արդ. Պուրճէքեան։

Ուր. 29 Օգոստ.- Նախատօնակին ի Ս. Էջմիածին հանդիսապետեց Լուսարարապետ Սրրագանը:

Շր. 30 Օգոստ.- Տօն Շողակաթի Ս. Էջմիածնի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Աստուածամայր: Ժամարարն էր Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

- Կէսօրէ Ետք, Պատրիարք Սրթազան Հօր գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր, ինքնաշարժերով իջան Գեթսեմանիի ձորը ու «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր պաշտուեցան ժամերգութիւն եւ նախատօնակ։

- Գիշերասկիզբին, նոյն վայրին մէջ պաշտուեցաւ «Եկեսցէ»ի եւ Հսկման կարգերը։ Հանդիսապետն էր Տ. Սեւան Եպս. Ղարիպեան:

4/p. 31 Օգոստ.- Վերափոխումն Ս. Աստուածածնի: Առաւօտուն Պատրիարք Սրթազան Հօր գլխաւորութեամբ Միաբան Հայրեր, ինքնաշարժերով իջան Գեթսեմանիի ձորը ու «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատոյց եւ քարոզեց Տ. Սեւան եպս. Ղարիպեան: Պատարագիչ Սրրազանը հանդիսապետեց «Անդաստան»ին։

P2. I Սեպտ.- Յիշատակ Մեռելոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան:

U. Պատարագէն ետք կատարուեցաւ մասնաւոր հոգեհանգստեան կարգ, համայն ննջեցեալներուն հոգիներուն ի հանգիստ: Հանդիսապետն էր Լուսարարապետ Սրբազանը:

Շր. 6 ՍԵպտ.- Ս. պատարգը մատուցուեցաւ Մայր Տանարի Ս. Աստուածածնայ խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Էմմանուէլ Արդ. Աթաջանեան:

4 իր. 7 ՍԵպտ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ, Երաշխաւոր Ս. Աստուածածնի խորանին վրայ: Ըստ սովորութեան պատարագեց Տաճարին Տեսուչը՝ Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան: Հանդիսապետն էր Տ. Արիս Եպս. Շիրվանեան:

P2. 8 Սեպտ.- Նախատօնակին ի Ս. Յակոր հանդիսապետեց Տ. Արիս Եպս. Շիրվանեան։

92.9 Սեպտ.- <u>Ս. Յովակիմայ եւ Աննայի</u> Ըստ սովորութեան Ս. Պատարագը մատուցուեցաւ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տանարի, Հայր Յովսէփի գերեզմանին վրայ: Պատարագեց Տանարին Տեսուչը Տ. Հայրիկ Վրդ. Գալայնեան: Հանդիսապետն էր Տ. Համրարձում Վրդ. Քէշիշեան:

Շր. 13 Սեպտ.- Սրրոց Առաքելոցն Թովմայի, Յակորայ եւ Շմաւոնի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Իսահակ Արդ. Մինասեան:

- Նախատօնակին ի Ս. Յակոր նախագահեց Պատրիարք Սրթազանը:

կիր. 14 Սbպտ.- <u>Գիւտ Գօտուդ Ս.</u> <u>Աստուածածնի</u>: Оրուան հանդիսաւոր Ս. Պատարագը ԳԵթսեմանիի Ս. Աստուածածնայ Shրամօր Ս. ԳԵրեզմանին վրայ մատոյց եւ քարոզեց Լուսարարապետ Սրրազանը։ Հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ 8 Սեպտեմբերին տաճարին ընդհանուր մաքրութեան մասնակցողներու հանգուցեալ հարազատներուն հոգիին ի հանգիստ որոնց ցանկը կարդաց Տաճարին Տեսուչը՝ Տ. Հայրիկ Վրդ. Գալայնեան։ Հանդիսապետն էր Տ. Սեւան եպս. Ղարիպեան։ Դշ. 17 Սեպտ.- Նախատօնակին ի Ս.

Յակոր հանդիսապետեց Լուսարարապետ Սրրազանը:

b2. 18 Սեպտ.- Մնունդ Ս. Աստուածածնի: Առաւօտուն, Լուսարարպետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միարան Հայրեր ինքնաշարժերով իջան Գեթսեմանիի ձորը ու «Հրաշափառ»ով մուտք գործեցին դէպի Տաճար։ Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատոյց եւ քարոզեց Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ Տ. Արիս Եպս. Շիրվանեան:

Շր. 20 Սեպտ.- Նիկիոյ Ս. Ժողովոյն հրհք Հարիւր Ութևւտասն Հայրապետացն: Ս. Պատարագը մատուցուհցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Ղեւոնդ Արդ. Յովհաննիսհան:

- Կէսօրէ Խոք կատարունցաւ Գոհարանական Մաղթանք Հայաստանի Հանրապետութեան անկախացման ԺՔ. տարեդարձին առիթով, նախագահութեամբ Պատրիարք Սրրագան Հօր:

Կիր. 21 Սեպտ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Լուսրարապետ Սրթազանը: Ժամարարն էր Պարէտ Ծ. Վրդ. Երէցեան:

Ուր. 26 Սեպտ.- Մայր Տաճարին մէջ, Երեկոյեան ժամերգութեան աւարտին, Պատրիարք Սրրազան Հայրը Ուրար կրելու արտօնութիւն շնորհեց Ժառ. վարժարանի Դ. դասարանի աշակերտ Արտակ Յակորեանի, Յովհաննէս Գէորգեանի եւ Պաւէլ Դաւթեանի: Իսկ յաջորդ առաւշտ Սարկաւագ ձեռնադրուելիք Ուրարակիր Յարութիւն Եղիայեանին, Աւետիք Ալէքեանին, Գրիգոր Աւագեանին, Սամուէլ Ղազարեանին եւ Արմէն Սինանեանին շնորհեց Կիսասարկաւագութեան Աստիճան:

Շթ. 27 ՍԵպտ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Թէոդորոս Արդ. Զաքարեան:

Գատարագի Ճաշու ընթերցուածներէն առաջ, հինգ կիսասարկաւագները ծնրաչոք առաջնորդուեցան դէպի Ս. Գլխադրի մատուռը, խարտաւիլակութեամբ Լուսարարապետ Սրրազան Հօր, առընթերակայ ունենալով Ժառ. Վարժարանի Տեսուչ Գարէտ Ծ. Վրդ. Երէցեան եւ Ս. Յարութեան Տաճարի Տեսուչ Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան: Պատրիարք Սրթազան Հայրը սարկաւագներու ձեռնադրութիւնը կատարեց, եւ ուրարները օրհնելով, անոնց իշխանութիւն տուաւ պաշտամունքներու ընթացքին Աւետարան ընթեռնելու եւ բուրվառով խնկարկութիւն կատարելու, եւ Ս. Պատարագի սկիեր վերաբերելու:

Շարաթ կէսօրէ Ետք, Խաչվերացի մեծահանդէս նախատօնակին նախագահեց Պատրիարք Սրրազան Հայրը: Ապա Կենաց Փայտի մասունքը Ս. Գլխադրի մատուռէն թափօրով փոխադրեց Աւագ Սեղան: Պաշտամունքի աւարտին տեղի ունեցաւ Քահանայական Կոչման Կարգը, Ընծայարանի շրջանաւարտ սաներէն Յովնան Սրկ. Բաղդասարեանի, խարտաւիլակութեամը Լուսարարապետ Սրրազան Հօր, եւ առընթերակայութեամբ Տեսուչ Պարէտ Ծ. Վրդ. Երէցեանի եւ Թէոդորոս Արդ. Ջաքարեանի: Ընծայեալը ծնրադրած՝ Աւագ Դուռէն առաջնորդուեցաւ դէպի փոքր Ատեան, ուր ձեռնադրող Պատրիարք Սրրազան Հօր հարցումներուն պատասխանելով «նգովեց չար աղանդները» եւ կարդաց «Ուղղափառ Հաւատոյ դաւանութիւնը»:

- Նոյն գիշերասկիզին, Մայր Տաճարին մէջ պաշտուած «Եկեսցէի» եւ Հսկումի կարգերուն նախագահեց Պատրիարք Սրրազան Հայրը։

- 4hp. 28 Ивщи.- Soli Царшавий И. Խաչին: Օրուան Ս. Պատարագր Մայր Տաճարին Աւագ Սեղանին վրայ մատոյց Պատրիարք Սրբազան Հայրը: Սպասարկող վարդապետներն էին Համբարձում Վրդ. Քէշիշեան եւ Բագրատ Արդ. Պուրճէքեան: Իսկ բուրվառակիրներն էին Ришниц Ирп. Грашивша вс Авглад Ирп. Յովհաննիսհան: Պատրիարք Սրրազան Հօր օրհնութեամբ տեղի ունեցաւ Յովնան Սրկ. Քահանայական ձեռնադ-Բաղդասարեանի րութիւնը եւ օծումը, խարտաւիլակութեամբ Lпишршршщым Uppшqшն Lop, шпрбрьրակայութեամբ Տեսույ Պարէտ Ծ. Վրդ. Երէցեանի եւ Սամուէյ Ծ. Վրդ. Աղոյեանի, վերակոչուելով S. 4nphili կուսակրօն քահանայ:

«Ողջոյն»ի պահուն Պատրիարք Սրրազան Հայրը եւ Հոգեւորական Հայրերը մօտեցան ի համբոյր օծեալի աջոյն: Պատարագի աւարտին, եկեղեցւոյ ատեանին մէջ, հաւատացեալներ եւ դպիրներ մօտեցան աջահամբոյրի:

 Նոյն յետ միջօրէին, Աւագ խորանի վրայ, S. Կորիւն ստացաւ կուսակրօն Աբեղայի Վեղարի օրհնութիւնը Պատրիարք Հօր ձերամբ, եւ մասնակցեցաւ Մայր Տաճարի մէջ տեղի ունեցած աւանդական «Խաչվերացի» մեծահանդէս «Անդաստան»ին:

- Իրիկնադէմին, Պարտիզաթաղի Վարդապետաց սեղանատան մէջ, Միարանական ընթրիքին ընթացքին մաղթանքի խօսքեր եղան Արիս Եպս. Շիրվանեանի եւ Վարժարանի Տեսուչ Պարէտ Ծ. Վրդ. Երէցեանի կողմէ: Տ. Կորիւն Արեղան իր եւ իր ծնողաց երախտագիտութիւնը յայտնեց իրեն տրուած ուսման եւ որպէս միարան Ս. Աթոռոյ ծառայելու իրեն տրուած պատեհութեան համար: (Կորիւն Աթեղայի հայրը՝ Պ. Մանթաշ Հայաստանէն ուխտաւորաթար ներկայ է եւ մասնակից արարողութեանց)։

Պատրիարք Սրրազան Հայրը անդրադարձաւ Միաթանութհան թազմերես պարտականութիւններուն, եւ քաջալերեց «Խաչը կրելու», որ քրիստոնեայի հոգեկան, իմացական եւ ֆիզիքական կեանքին ուղեցոյցն է, եւ մարդուն գոյութեան կու տայ իմաստ, նկարագիր, տեսիլք եւ տոկունութիւն։

- Նորընծայ Տ. Կորիւն Արդ. Բաղդասարեան իր «Քառասունքը» պիտի անցընէ Ս. Յարութեան Տաճարին մէջ, ուսուցիչ ունենալով Տաճարի Տեսուչ Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան:

Բշ. 29 ՍԵպտ.- Յիշատակ Մեռելոց: Մայր Տաճարի Ս. Գլխադրի մատրան մէջ պատարագեց Տ. Գուսան Վրդ. Ալճանեան:

U. Պատարագէն Ետք, կատարուեցաւ մասնաւոր հոգեհանգստեան պաշտօն, Մելքոնեան հարագատներուն հոգիին ի հանգիստ, Նախագահութեամբ Պատրիարք Սրրագան Հօր։

Շթ. 4 Հոկտ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Նշան վերնամատրան մէջ Ժամարարն էր Տ. Համրարձում Վրդ. Քէշիշեան:

Կիր. 5 Հոկտ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Արիս Եպս. Շիրվանեան: Ժամարարն էր Տ. Ընծանուէր Արդ. Բարախանեան:

Ուր. 10 Հոկտ.- Նախատօնակը պաշտուեցաւ Ղպտոց Ս. Գէորգ Վանքի Եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Տ. Արիս Եպս. Շիրվանեան։

Շр. 11 Հոկտ.- Ս. Գէորգայ Չօրավարին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ղպտոց Ս. Գէորգ Եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Տ. Արիս Եպս. Շիրվանեան: Ժամարարը Եւ քարոզիչն էր Տ. Իսահակ Արդ. Մինասեան:

- Կէսօրէ Խոք, Լուսարարապետ Սրթագան Հօր գլխաւորութեամբ Միարանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր մեր վերնամատրան մէջ պաշտուեցան մամերգութիւնն ու նախատօնակը։ Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրթատեղեաց այցելութեան, հանդիսաւոր թափօր Տաճարեն ներս։ Թափօրապետն էր Տ. Կոմիտաս Վրդ-Շէրպէթճեան։

4pp. 12 Հոկտ.- Տ<u>օն Վարագայ Ս. Խաչին</u> (660): Գիշ Երային Եւ Առաւօտ Եան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ։ Հանդիսապետն էր Տ. Սեւան Եպս. Ղարիպեան: - Պատրիարք Սրթազան Հօր Երկրորդ պաշտօնական մուտքէն Ետք, Տ. ՍԵւան Եպս. Ղարիպեան, օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատոյց Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ: «Հայր Մեր»էն առաջ քարոզեց Լուսարարապետ Սրթազանը:

Շр. 18 Հոկտ.- <u>Սրրոց Եօթանասուն եւ</u> Երկու Աշակերտացն Քրիստոսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի ներքին գաւթին մէջ գտնուող Ս. Գէորգայ Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Ղեւոնդ Արդ. Յովհաննիսեան:

4 հր. 19 Հոկտ.- Այսօր կատարուեցաւ Ռամլէի Ս. Գէորգայ վանքի տարեկան ուխտագնացութիւնը, ի ներկայութեան Եաֆայէն եւ Երուսաղէմէն մասնակցող հաւատացեալներու: Ժամարարը եւ քարոզիչն էր Տ. Թէոդորոս Արդ. Ջաքարեան:

Ուր. 24 Հոկտ.- Սրրոց Թարգմանչաց նախատօնակին ի Ս. Յակոր նախագահեց Պատրիարք Սրբագան Հայրը:

Շր. 25 Հոկտ.- Ս. Թարգմանչաց Վարդապետացն մերոց: Տօն Ազգային եւ Եկեղեցական:

- Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ իր անդրանիկ պատարագը մատոյց նորընծայ Տ. Կորիւն Արղ. Բաղդասարեան: «Հայր Մեր»էն առ աջ քարոգեց Տ. Պարէտ Ծ. Վրդ. Երէցեան:

U. Պատարագի վերջաւորութեան կատարուեցաւ մասնաւոր հոգեհանգստեան պաշտօն մեծանուն բարերարներ, Գալուստի, Նուարդի, Սարգսի եւ Տիրուհիի եւ համայն Կիւլպէնկեան գերդաստանի ննջեցեալներու հոգիներուն ի հանգիստ, նախագահութեամր Պատրիարք Սրբազան Հօր:

4իր. 26 Հոկտ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ: Ժամարարն էր նորընծայ Արեղային ուսուցիչը Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան:

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

Բշ. 4 Օգոստոս – Համահայկական Երրորդ Մարզախաղերուն մասնակցելու համար դեպի Երեւան մեկնելու առիթով, Պատրիարք Սրթազան Հօր այցելեցին եւ իր օրհնութիւնը ստացան Հ.Մ.Ը.Միութեան եւ Հ.Ե.Միութեան մարզիկներէն կազմուած 16 երիտասարդներու խումբ մը, որ Սուրթ Երկրի անունով առաջին անգամն ըլլալով պիտի մասնակցէր Համահայկական Մարզախա– դերուն։ Պատրիարք Սրթազան հետաքրքրուեցաւ խումբին մասնակցութեան ծրագիրներով, եւ գնահատեց անոնց այս նախաձեռնութիւնը, եւ քաջալերեց զանոնք խաղերու ընթացքին մար– զիկի վայել բարձր ոգի ցուցաթերել եւ մրցա– նակներ ապահովել։

- Պատրիարք Սրթազան Հօր այցելութիւնները Հայ Սկաուտական Բանակումներու։

Հ.Մ.Ը.Միութեան սկաուտներու եւ արենուշներու բանակումին, Պատրիարք Սրթազան Հայրը ընկերակցութեամբ Նորայր Արդ. Գազազեանի, այցելութիւն տուաւ 25 Յուլիս, Ուրթաթ երեկոյին, Պէյտ Շէմէշ քաղաքի Մսիլաթ Ցիօն արուարձանի մէջ։

Նոյն վայրին մէջ, Հ.Ե.Միութեան սկաուտներուն եւ արենուշներուն Պատրիարք Սրթազան Հայրը այցելեց 16 Օգոստոս, Ծարաթ երեկոյին, ընկերակցութեամբ Արիս Եպս. Ծիրվանեանի եւ Նորայր Արղ. Գազազեանի։

Ուրթ. 8 Օգոստոս.– Հայազգի հռչակաւոր Երաժիշտ-Երգահան Արամ Խաչատուրեանի ծննդեան 100 ամեակի առթիւ գեղարուեստական հանդէս տեղի ունեցաւ Յոպպէի Ս. Նիկողայոս Վանքին մէջ, նախագահութեամբ Պատրիարք Սրբազան Հօր։

Sbninju hngbing hndhi Cudwunith Upn. Բարախանհանի նախաձհոնութհամբ եւ կազմակերպութեամբ երեկոյթին իրենց մասնակցութիւնը նուագով եւ դաշնակի կատարմամը բերին խումը մը հայորդիներ։ Հոգեշնորհ Հայր Սուրթը ներկայացուց մեծ երգահանի կեանքն ու գործունէութիւնը, որմէ հտք մեծ պաստառի վրայ ցուցադրուեցաւ անոր հետ առընչուող հայկական ֆիլմը։ Այնուհետեւ, «Հոգեհանգրստեան Պաշտօն» կատարուհցաւ վասն հոգւոցն ամենայն հրգահանից, յիշատակութեամբ Կոմիտաս Վրդ.ի եւ Արամ Խաչա-Պատրիարք wnippmuch: Սրրազան Հայրը ընկերակցութեամը Արիս Եպս. Շիրվանեանի եւ Նորայր Արդ. Գազագեանի նախագահեց եւ իր օրենութիւնը տուաւ հաւաքուած բազմութեան, որոնք եկած էին Իսրայէլի տարբեր շրջաններէն։

Գշ. 2 Սեպտ.- Առաւօտեան ժամը 8.30ին, Ս. Թարգմանչաց Մանկապարտէզի եւ Երկրորդական վարժարանի ուսումնական նոր տարեշրջանի րացումը տեղի ունեցաւ նախագահութեամբ Պատրիարք Սրթազան Հօր, որուն կ՝ընկերանային Միաթան Հայրեր։ Վարժարանի Տեսուչ՝ Թէոդորոս Արղ. Զաքարեանի բարեգալուստի խօսքէն ետք Պատրիարք Սրթազան Հայրը մաղթեց կրթութեան ծրագիրներու նորանոր յաջողութիւններ՝ աշակերտութեան, ուսուցչական կազմին եւ ծնողաց գործակցութեամբ։ Միասնական աղօթքէն ետք, Պատրիարք Սրթազան Հայրը հանդիպում ունեցաւ աշակերտներուն եւ ուսուցիչներուն հետ իւրաքանչիւր դասարանի մէջ։

Ուր. 5 Սեպտ.- Առաւօտեան ժամը 9ին տեղի ունհցաւ ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի վերարացումը։ Կրթական տարեմուտի արարողութեանը ներկայ էին Միարանութիւն եւ ուսուցչական կազմ, գլխաւորութեամբ Պատրիարք Սրրազան Հօր։ Վարժարանի տեսուչի րացակայութեան՝ առժամեայ հսկողութիւնը ստանձնած Արիս Եպս. Շիրվանհան բացումը կատարեց 2003-2004 ուսումնական տարեշրջանին, 30 Ժառանգաւոր սանհրով եւ ուսուցչական կազմով։ Յետ ընթերցման «Ս. Աւետարանի» պատգամին, Պատրիարք Սրթազան Հայրը դիտել տուաւ որ այս տարի րացառարար յաւելեալ նոր աշակերտներ պիտի չունենանք։ Վանական եւ դպրոցական մեր կենցաղին եւ պարտականութեանց արդէն գիտակից եւ նախանձախնդիր ոգիով կատարենք ուսանողի եւ ուսուցանողի մեր պարտաւորութիւնները։

Պատրիարք Սրթազան Հայրը առանձին տեսակցութիւն ունեցաւ ուսուցչական կազմին հետ եւ այցելեց դասարանները։

Կիր. Սեպտ 14.- Լատին Ամերիկեան երեք պետութիւններու՝ Սալվատորի, Քոսթա Ռիկայի եւ Հունտուրասի անկախութեան օրուան առթիւ, Երուսաղէմի "Crown Plaza" պանդոկին դահլիճին մէջ կազմակերպուած հիւրասիրութեան ներկայ գտնուեցաւ Պատրիարք Սրրազան Հայրը, ընկերակցութեամր Արիս Եպս. Շիրվանեանի եւ Իսահակ Արդ. Մինասեանի։ Ներկայ էին նաեւ Իսրայէլի Նախագահը, Արտգործնախարարն ու Քաղաքապետը, ինչպէս նաեւ այլ թարձրաստիճան հիւրեր։

ዮ2. 22 Սեպտ.- Հայաստանի Հանրապետութեան 12րդ տարեդարձի առթիւ, Երուսաղէմի մէջ ՀՀ Պատւոյ Հիւպատոս Ցոլակ Մոմնեանի հրաւէրով, Նօթր Տամի թացօթեայ հաւաքավայրին մէջ կազմակերպուած հիւրասիրութեան, ներկայ գտնուեցաւ Պատրիարք Սրթազան Հայրը Միաթանութեան անդամներով:

– Ներկայի քաղաքական եւ տնտեսական ծանր պայմաններուն ներքոյ, երբ ուխաւորներու եւ զթօսաշրջիկներու թիւը որոշապէս նուազած է, Միացեալ Նահանգներէն Սրրոց Ցակորեանց Վանք ուխտաւորաթար արդէն երկրորդ անգամ այցելեցին երիտասարդ կիսասարկաւագներ Քարլ Պարտաքեանը եւ Լեւոն Ալթիփարմաքեանը։ Օգոստոս 25-էն մինչեւ Սեպտեմբեր 9-ը երկու շարթուայ ընթացքին անոնք մասնակցեցան եկեղեցական եւ Ս. Տեղեաց արարողութիւններուն՝ քաջալերելով մեր Ժառանգաւոր տղաքը։ Ինչպէս նաեւ անոնք ներկայ գտնուցեան Ժառանգաւորաց եւ Թարգմանչաց վարժարաններու դպրոցական նոր տարեշրջանի թացման արարողութեանց։ Օրինակելի է անոնց ընթացքը եւ խրախուսելի նուիրումն ու ծառայասիրութիւնը հանդէպ Ս. Յակոբեանց դարաւոր հաստատութեան։

92. 23 Ոստիկանապետ Uhuo Ubuyun --Ծախամի հրաւէրով, Հրէից Նոր Տարեմուտին առթիւ Հին Քաղաքին Եաֆայի Դարպասին կից Դաւթի Բերդին մէջ տեղի ունեցաւ հիւրասիրութեան արարողութիւն, որուն կը մասնակցէին Երուսաղէմի եւ շրջակայ տարբեր համայնքներու եւ յարանուանութեանց ներկայացուցիչներ եւ համայնքապետեր (մուխթար)։ Պատրիարք Սրբազան Հայրը ընկերակցութեամբ Արիս Եպս. Շիրվանհանի, Իսահակ Արղ. Մինասհանի եւ Հայոց Մուխթար Կարապետ Ցակորհանի նհրկայ գտնուհցաւ հիւրասիրութհան։ 42. 1 Inho .- Upniumatth dte Uhugbul

Դշ. 1 Հոկտ.- Երուսաղշեր ենջ Երացմալ Նահանգաց Հիւպատոսարանի հրաւերով, Ամերիքըն Գօլօնի պանդոկի պարտէզին մէջ Միացեալ Նահանգաց նորանշանակ Ընդհանուր Հիւպատոս Դաւիթ Փիրսին «Բարի Գալուստ»ի առթիւ տրուած հիւրասիրութեան ներկայ եղաւ Պատրիարք Սրթազան Հայրը, ընկերակցութեամբ Արիս Եպս. Շիրվանեանի եւ Իսահակ Աթղ. Մինասեանի։

Բշ. 13 Հոկտ.- Երուսաղէմի քաղաքապետ Ուրի Լուփիանսքիի կողմէ բոլոր կրօնապետներուն ուղղուած, Հրէից Տաղաւարաց-Սուքօթ տօնին առթիւ եղած հրաւէրին ընդառաջելով, Դաւթի Բերդին բացօթեայ հրապարակին մէջ տեղի ունեցած հիւրասիրութեան ներկայ գտնուեցաւ Պատրիարք Սրրազան Հայրը, ընկերակցութեամբ Արիս Եպս. Շիրվանեանի, Գուսան Վրդ. Ալնանեանի եւ Իսահակ Արղ. Մինասեանի:

Բշ. 14 Հոկտ.- Սպանիոյ Ազգային Օրուան տօնակատարութծան առթիւ, Երուսաղեմի Ընդհանուր Հիւպատոս Սէնորա Ֆերէյի հրաւէրով, հիւպատոսարանի պարտէզին մէջ կազմակծրպուած ընդունելութծան ներկայ գտնուեցաւ Պատրիարք Սրթազան Հայրը, ընկերակցութծամր Արիս Եպս. Շիրվանծանի, Գուսան Վրդ. Ալճանծանի եւ Իսահակ Արղ. Մինասծանի։

Բշ. 20 Հոկտ.- Երեկոյեան, Հռովմի Քահանայապետի գահակալութեան Ն.Ս.Օ.Տ.Տ. Յովհաննէս Պօղոս Բ.ին 25րդ տարեդարձին առիթով, Պապական Նուիրակ Բիհթրօ Արքեպիսկոպոս Սամպիի հրաւէրին ընդառաջելով, Երուսաղէմի Նոթրը Տամ Կեդրոնին մէջ կազմակերպուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Պատրիարք Սրրազան Հայրը, Գուսան Վրդ. Ալճանեան, Նորայր Արղ. Գազազեան եւ Իսահակ Արղ. Մինասեան։

Կիր. 26 Հոկտ.- Աւստրիոյ Ընդհանուր եւ Լիազօր Դեսպան Պրն. Հէնկըլին հրաւէրով, Հերցէլիոյ դեսպանատան բակին մէջ, Աւստրիոյ ազգային օրուան առիթով կազմակերպուած հիւրասիրութեան ներկայ գտնուեցաւ Պատրիարք Սրրազան Հայրը, ընկերակցութեամբ Բագրատ Աթղ. Պուրճէքեանի:

Ρ2. 27 Հոկտ.- Պաշտօնական այցով Սուրթ Երկիր ժամանեց Ֆրանսիսկեան Ուխտի Միաթանութեան ընդհանուր մեծաւոր Գերշ. Խօգե Ռօգերիվիաս Քարթալլօն։ Իր ժամանումին դիմաւորութեան թափօրին մասնակցեցաւ Աւագ Թարգման Գուսան Վրդ. Ալնանեան, երկու «գաւասներով», մինչեւ Ս. Ցարութեան Տանարի մուտքը, ուր Տաճարի տեսուչ Սամուէլ Վրդ-Աղոյեան Ֆրանսիսկեան եւ Ցոյն տեսուչներուն հետ միասին պաշտօնապես «Բարի Գալուստ» մաղթեցին Ֆրանսիսկեան Մեծաւորին։

Գշ. 28 Հոկտ.- Առաւօտեան, Երուսաղէմի Ֆրանսիսկեան Միաթանութեան անդամներ եւ Քիւսթոտը, իրենց Ուխտի Ընդհանուր Մեծաւորին ընկերակցելով, Պատրիարք Սրթազան Հօր այցելութեան եկան։ Ընդունելութիւնը տեղի ունեցաւ Պատրիարքարանի դահլիճին մէջ, Պատրիարք Սրթազան Հօր, Լուսարարապետ Նուրհան Արք. Մանուկեանի եւ Սեւան Եպս. Ղարիպեան Սրթազաններու եւ Միաթանութեան հոգեւորական հայրերու ներկայութեամբ, անդրադառնալով սիթալիր գործակցութեան կարեւորութեան, նկատի առած երկրին ներկայ տագնապալի կացութիւնը եւ սրթատեղիներու վերարերեալ հարցերը։

Գշ. 30 Հոկտ.- Երուսաղէմի մէջ Ֆրանսայի Ընդհանուր Հիւպատոս Ռէժի Քէօթշէթ, ընկերակցութեամբ հիւպատոսարանի աշխատակիցներուն, որոնց մէջ էր նաեւ բազում տարիներու պաշտօնեայ Օր. Սիրարփի Սարգիսեան, Պատրիարքարան այցելութեան եկան։ Իսահակ Արդ-Մինասեան զանոնք առաջնորդեց Ս. Ցակոթայ Մայր Տաճարի եւ Վանքի տարբեր հաստատութիւններ. հին տպարան, թանգարան, Ս. Թարգմանչաց եւ Ժառանգաւորաց Վարժարաններ, Ս. Հրեշտակապետաց եկեղեցի։ Ապա, Ընդհանուր Հիւպատոսն իր աշխատակիցներով հանդիպում ունեցաւ Պատրիարք Սրթազան Հօր հետ։